

WWF Ինտերնեյշնլի խարդախության/կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման քաղաքականությունը

Հիմնական քաղաքականություն

WWF Ինտերնեյշնլը պարտավորություն է ստանձնել իր գործունեության իրականացման ժամանակ կիրառել խարդախության/կոռուպցիայի վտանգի կառավարման արդյունավետ մոտեցում թե՛ կազմակերպության ներսում, և թե՛ նրա կողմից կառավարվող գործողություններում:

WWF Ինտերնեյշնլը որդեգրել է խարդախության/կոռուպցիայի բացառման սկզբունքը: Լինելով կազմակերպություն, որը դատապարտում է կոռուպցիան և պայքարում դրա դեմ՝ որպես աղբատության, շրջակա միջավայրի դեգրադացիայի և վատ ղեկավարման հիմնական պատճառ, WWF Ինտերնեյշնլն իր անձնակազմից պահանջում է միշտ առաջնորդվել այդ երևույթների հանդեպ անհանդուրժողականության սկզբունքով և կիրառել այն բոլոր գործընթացներում ու հաստատված ռազմավարություններում՝ իր գրասենյակներում խարդախությունն ու կոռուպցիան կանխելու նպատակով: Անձնակազմի բոլոր անդամները և կամավորները պետք է անթերի լինեն իրենց անհատական գործողություններում:

Խարդախությունն ու կոռուպցիան WWF Ինտերնեյշնլի արժեքների և հեղինակության ամենամեծ սպառնալիքներն են, ուստի դրանք վերաբերում են անձնակազմի բոլոր անդամներին ու կամավորներին: Խարդախության, կոռուպցիայի ցանկացած դրսևորման կամ հավանականության դեպքում WWF Ինտերնեյշնլը կարձագանքի խիստ և հետևողական կերպով:

WWF Ինտերնեյշնլը միշտ ձգտում է իր աշխատակիցների, կամավորների, գործընկերների, աջակիցների և մատակարարների հետ հարաբերություններում լինել ազնիվ ու անկեղծ և նրանցից էլ ակնկալում է համանման վերաբերմունք իր և միմյանց հանդեպ:

Պահանջվող չափանիշներին չհամապատասխանող գործելակերպն անընդունելի է: Նման գործելակերպի ենթադրության դեպքում պետք է կատարվի ուսումնասիրություն, իսկ ենթադրության հաստատման դեպքում պետք է ձեռնարկվեն համապատասխան իրավական և կարգապահական միջոցառումներ:

WWF Ինտերնեյշնլի և իր մասնաճյուղերի ամբողջ անձնակազմի (Օրագրային գրասենյակներ և այլ գրասենյակներ, որոնք հաշվետու են WWF Ինտերնեյշնլին կամ դրա ծրագրային գրասենյակներին) առաջադրանքն է երաշխավորել, որ իրականացվում են խարդախության և կոռուպցիայի հնարավոր դեպքերի կանխարգելման, սահմանափակման, բացահայտման ու տեղեկացման համապատասխան միջոցառումներ:

Սույն քաղաքականությունը նախատեսված է

- Սահմանելու խարդախ և կոռումպացված գործողությունները և բարձրացնելու իրազեկությունը դրանց վերաբերյալ
- Նպաստելու դրանց կանխարգելմանը
- Սահմանելու կազմակերպության ներսում գործելակերպի չափորոշիչները
- Սահմանելու պատասխանատվությունները տարբեր մակարդակներում
- Խթանելու և հասկանալու դրանց հայտնաբերման մեթոդները
- Սահմանելու խարդախության և կոռուպցիայի դեպքերի հետաքննության և հաղորդման հստակ ուղին

Երբ որևէ աշխատակից կասկածներ ունի որևէ գործողության կոռումպացված կամ խարդախ եղանակով իրականացման մեջ, առաջին հերթին պետք է դիտարկի խնդիրը կազմակերպության գործունեության ուղեցույցներում սահմանված քաղաքականությունների շրջանակներում, իսկ բավարար պարզաբանում չգտնելու դեպքում պետք է խորհրդակցի WWF Ինտերնեյշնլի Գլխավոր գործառնական տնօրենի հետ:

Մահմանումներ

Ի՞նչ է խարդախությունը և կոռուպցիան

Խարդախություն հասկացությունը օգտագործվում է մի շարք գործողությունների բնութագրման համար՝ խորամանկություն, կաշառակերություն, կեղծիք, շորթում, գողություն, դավադրություն, յուրացում, ապօրինի սեփականացում, կեղծ ներկայացուցչություն, նյութական փաստերի քողարկում և գաղտնի համաձայնություն: Այն կանխամտածված գործողություն է կազմակերպության նկատմամբ, որն իրականացվում է անձնական կամ կոլեկտիվ առավելություններ ձեռք բերելու, ինչպես նաև պարտավորություններից ու կորուստներից խուսափելու նպատակով:

Կոռուպցիան անարդար կերպով երրորդ անձի նկատմամբ առավելություններ ձեռք բերելու գործողություն է վերապահված իշխանությունը սեփական շահերին ծառայեցնելու միջոցով: Խարդախությունը և կոռուպցիան չեն ենթադրում միայն դրամական կամ նյութական շահ, դրանց մեջ կարող է ընդգրկված լինել նաև ոչ շոշափելի օգուտ, ինչպես օրինակ դիրք կամ տեղեկություն:

Այսպիսով, խարդախությունը ներառում է գործողությունների մի լայն շրջանակ՝ ընդգրկելով, բայց ոչ սահմանափակվելով ստորը բերվածներով՝

- Հիմնական միջոցների գողություն
- Դրամական միջոցների ապօրինի յուրացում
- Կազմակերպության հիմնական միջոցների սխալ գործածություն (օր.՝ առանց թույլտվության WWF-ի փոխադրամիջոցների օգտագործում անձնական կարիքների համար)
- Խորամանկում (օր.՝ աշխատանք ստանալու նպատակով որակավորման վերաբերյալ կեղծ տվյալների ներկայացում)
- Գողություն գործընկերներից, հաճախորդներից կամ մատակարարներից
- Սեփականության իրավունքի գողություն կամ չարաշահում
- Մտավոր սեփականության իրավունքի գողություն
- Դատավորներին կամ այլ պետական գործիչներին աջակցություն կամ փող տրամադրելը՝ ի շահ անհատական կամ WWF-ի նպատակների
- Երրորդ անձանց հետ պայմանագրերի կնքում՝ ի օգուտ իրենց անձնական շահերի:

Կանխարգելում

WWF Ինտերնեյշնլը ձգտում է կանոնակարգել իր աշխատակազմի գործողությունները և հավաստիանալ, որ գործում են խարդախության և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված համապատասխան գործընթացներ, որոնց թվում են՝

- Կազմակերպության գործունեության/ընթացակարգերի ուղեցույցներ՝ մշակված WWF Ինտերնեյշնլի կողմից և ուղեցույցներ՝ մշակված հատուկ գրասենյակների համար, մասնավորապես՝
 - ճանապարհորդությունների և դրա ծախսերի հետ կապված կանոնակարգեր
 - փոխադրամիջոցների օգտագործման կառավարում և հսկողություն
 - խորհրդատուների ծառայություններից օգտվելու կառավարում և հսկողություն
 - անհրաժեշտության դեպքում պարտականությունների համապատասխան բաշխման ապահովում
- Կադրային գործընթացներ/ աշխատողների տեղեկագիրք
- Աշխատանքային պայմանագիր
- Ցանցային չափորոշիչներ և մասնավորապես խորհրդատուների վարձման չափանիշներ
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կանոնակարգ

- Ստանդարտ պայմանագրային դրույթներ՝ WWF-ի պատկերանիշի օգտագործման պաշտպանության և այլնի համար

Չնայած WWF Ինտերնեյշնլի հոգաբարձուները և Գլխավոր տնօրենն իրենց վրա են կրում ներքին վերահսկողության կայուն համակարգի հաստատման, պահպանման և կիրարկման ապահովման ողջ պատասխանատվությունը, գործնականում այս պատասխանատվություններն անմիջականորեն ընկած են անմիջական ղեկավարության վրա, որոնցից շատերը ներառում են WWF-ի բոլոր աշխատակիցներին, այդ թվում ծրագրային գրասենյակները և WWF Ինտերնեյշնլին հաշվետու մյուս մասնաճյուղերը:

Անհատական վարքագիծ

WWF-ի աշխատակիցները պետք է ունենան և ցուցաբերեն բարձր անձնային հատկություններ: Նրանք չպետք է ընդունեն կամ առաջարկեն նվերներ, հյուրասիրություն, կամ ցանկացած այլ տեսակի օգուտ երրորդ անձանցից, որը կարող է դիտվել որպես ազնվությունը վարկաբեկող կամ շահավետ է ծառայություն առաջարկող անձի կամ անձամբ ստացողի համար և/ կամ իրականացվում է WWF-ի հեղինակության հաշվին: Այնուհանդերձ, նյութական արժեք չունեցող փոքր նվերներ կարելի է ընդունել կամ առաջարկել համապատասխան իրավիճակներում, երբ չկա կոռուպցիա կամ շահերի բախում (տես՝ կազմակերպության գործունեության ուղեցույցները):

WWF-ի քաղաքականությունն է ոչ մի պարագայում չվճարել կամ արժեքավոր որևէ գործողության խոստանալ կամ առաջարկել որևէ պետական աշխատողի, որը հակասում է համապատասխան երկրում գործող օրենքները շրջանցելու համար: Ավելին, ոչ մի աջակցություն, վճար կամ արժեքավոր որևէ իր (դրամական կամ ոչ դրամական) չպետք է տրվի, խոստացվի, առաջարկվի կամ ընդունվի որևէ պետական աշխատողի կամ պաշտոնատար անձի կողմից ներքոհիշյալ նպատակներով.

- Ազդել որևէ պետական պաշտոնական ակտի կամ որոշման վրա
- Հարկադրել որևէ պետական աշխատողի կամ պաշտոնատար անձի՝ կատարելու, կամ չկատարելու որևէ գործողություն, որը դուրս է նրա օրինական պարտավորություններից
- Ձեռք բերելու կամ պահպանելու որևէ գործունեություն կամ ուղղել այն որևէ անհատի կամ կազմակերպության

Ի հավելումն նշվածի՝ ողջ անձնակազմը մշտապես պետք է հետևի WWF Ինտերնեյշնլի Էթիկայի կանոնակարգին և ապահովի, որպեսզի իրենց գործունեություններում չլինեն շահերի բախումներ: Նշված կանոնակարգը կցված է այս փաստաթղթին որպես հղում և հանդիսանում է ուղեցույց այս ոլորտում:

WWF Ինտերնեյշնլի Գլխավոր գործառնական տնօրենի պարտականությունները

WWF Ինտերնեյշնլի Գլխավոր գործառնական տնօրենն ունի ազնիվ/հակակոռուպցիոն միջավայրի խթանման հստակ պարտավորություններ և պատասխանատու է հետևյալի համար՝

- Սույն կանոնակարգի իրականացման նպատակով տնօրենների և ավագ մենեջերների կողմից նախատեսվող գործողությունների իրականացման ցուցումների ապահովում
- Համապատասխան տնօրենների/ ղեկավարների հետ համատեղ առկա կամ կասկածվող խարդախության և կոռուպցիայի զեկուցված դեպքերի անհապաղ և մանրակրկիտ հետաքննության կազմակերպում
- Համապատասխան իրավական և/կամ կարգապահական գործողությունների կիրարկման ապահովում առկա կամ կասկածվող խարդախության և կոռուպցիայի մեղավորների և մեղսակիցների հանդեպ
- Խարդախության/կոռուպցիայի դեպքերի մասին Գլխավոր տնօրենին և հոգաբարձուներին զեկուցում (վերստուգիչ հանձնաժողովի միջոցով)
- Սույն քաղաքականության թարմացում ներկայիս լավագույն պրակտիկային համահունչ

Տնօրենների և ծրագրային գրասենյակների ներկայացուցիչների պարտականությունները

WWF Ինտերնեյշնլի յուրաքանչյուր տնօրեն և ներկայացուցիչ (ծրագրային գրասենյակների պարագայում) իր պարտականությունների շրջանակներում պատասխանատու է արդար/հակակոռուպցիոն միջավայրի ապահովման համար:

Տնօրենները պետք է ապահովեն հետևյալը.

- Խարդախության/կոռուպցիայի կանխարգելման և հետաքննության ներկա քաղաքականությունը հասանելի է և ամբողջությամբ կիրառվում է բոլոր կառավարիչների և անձնակազմի բոլոր անդամների կողմից:
- Կառավարիչները և անձնակազմը անհրաժեշտ պատրաստվածություն ունեն իրենց պարտավորությունների ճշգրիտ իրականացման համար:
- Կառավարիչների և անձնակազմի համար ապահովված է անհրաժեշտ մթնոլորտը, (օր՝ խարդախության/ կոռուպցիայի հանդուրժողականության բացառման կանոնը ընկալված է, և անձնակազմը գիտի ինչպես և ում դիմել որևէ կասկած ունենալու դեպքում):
- Ձեկույցները ենթադրվող խարդախության և կոռուպցիայի վերաբերյալ պատշաճ կերպով ներկայացվում են վերադասներին:
- Յուրաքանչյուր հետաքննությանը անհապաղ հետևում են վերահսկողության բարելավման առաջարկներ:

Անմիջական ղեկավարների պատասխանատվությունները

Անմիջական ղեկավարները պատասխանատու են՝

- Գնահատել իրենց անմիջական պատասխանատվությամբ իրականացվող գործողություններում առկա խարդախության և կոռուպցիայի ռիսկերի տեսակները
- Իրենց իրավասության շրջանակներում ապահովել պատշաճ ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի առկայությունը
- Ապահովել, որ իրենց հաշվետու բոլոր աշխատակիցներին ամբողջությամբ հասկանալի է գործող ներքին վերահսկողական համակարգը և որ նրանք մշտապես հետևում են այդ համակարգի ընթացակարգերին

- Պարբերաբար վերանայել վերահսկողության համակարգերը՝ ապահովելու դրանց արդիականությունը և համոզված լինելու դրանց արդյունավետության մեջ
- Անմիջական ղեկավարները պետք է միշտ զգոն լինեն, քանի որ անսովոր իրադարձությունները կամ գործառնությունները հնարավոր է լինեն խարդախության կամ կոռուպցիայի նախանշաններ: Նրանք պետք է ապահովեն բավարար վերահսկողություն և պատրաստ լինեն ուշադրություն գարնող ցանկացած «կարմիր դրոշակների»: Այդ «կարմիր դրոշակների» կոնկրետ օրինակներ են՝
- Ոչ ընդունված և ոչ պատշաճ փաստաթղթային ձևակերպմամբ վճարումներ
 - Գնումներ, որոնք չեն իրականացվել սահմանված գործընթացներին համապատասխան
 - Խորհրդատուների չափազանց բարձր վարձատրություն
 - Նույն խորհրդատուների ծառայություններից մշտապես օգտվելը (օր. հիմքում ընկած են ընտանեական կապեր)
 - Պետական պաշտոնյաներին որպես խորհրդատու վարձելը կամ նրանց ճանապարհորդական վճարներ տրամադրելը
 - Չափից շատ քանակությամբ վառելիքի օգտագործում փոխադրամիջոցների համար
 - Հիմնական միջոցների վաճառք երրորդ անձանց, որոնք չեն իրականացվել հաստատված ընթացակարգերի համաձայն

Նման գործողությունները կարող են ուշադրություն գրավել կառավարման հատուկ ստուգումների ժամանակ, կամ էլ երրորդ անձինք կարող են կառավարման ուշադրությունը հրավիրել դրանց վրա:

Խախտումները հաճախ կարող են նաև ի հայտ գալ ներքին աուդիտի կամ տարեվերջյան աուդիտի ստուգումների ընթացքում: Այնուամենայնիվ ղեկավարները խարդախությունների բացահայտման հարցում իրենց հույսը չպետք է դնեն միայն աուդիտորների աշխատանքի վրա: Ներքին աուդիտի աշխատակիցը միշտ պետք է պատրաստ լինի խորհուրդներ և աջակցություն ապահովել վերահսկողության խնդիրների վերաբերյալ:

Ներքին աուդիտի պարտականությունները

Ներքին աուդիտից պահանջվում է իրականացնել ընթացիկ գործընթացների արդյունավետության անկախ ստուգում խարդախության և կոռուպցիայի ռիսկի կառավարման նպատակով: Ներքին աուդիտի խնդիրներից են.

- ղեկավարության կողմից իրականացվող կանխարգելման և հայտնաբերման գործընթացների վերանայում և զեկուցում
- այդ գործընթացների բարելավման առաջարկների ներկայացում
- ղեկավարության պահանջով նման ուսումնասիրությունների իրականացում կամ աջակցության ցուցաբերում
- խարդախության ռիսկի հնարավորության դիտարկում յուրաքանչյուր աուդիտի ժամանակ

Անձնակազմի պարտականությունները

WWF –ի անձնակազմի յուրաքանչյուր անդամ պարտավոր է երաշխավորել, որ կազմակերպության հիմնական ու ֆինանսական միջոցներին *վտանգ չի սպառնում* և անմիջապես զեկուցի խարդախության կասկածի կամ որևէ կասկածելի գործողություն նկատելուն պես (տես՝ հետքնությունների բաժինը ստորև): Բացի այդ, նրանք պետք է ահազանգեն իրենց անմիջական ղեկավարին այն դեպքերում, երբ վստահ են, որ խարդախության կամ կոռուպցիայի հնարավորություն կա թույլ ընթացակարգերի կամ ոչ արդյունավետ վերահսկողության պատճառով: Անձնակազմը պետք է աջակցություն ցուցաբերի հետաքննությունների

իրականացմանը՝ համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ և հետազոտողների հետ համագործակցությամբ: (օր.՝ հարցազրույցներ, փաստաթղթերի տրամադրում և այլն):

Խարդախության կամ կոռուպցիայի հետաքննությունը

Ահազանգում կասկածվող խարդախության մասին

Եթե անձնակազմի որևէ անդամ կասկածներ ունի որևէ գործողության կոռուպցիայի կամ խարդախության ճանապարհով իրականացման մեջ, ապա նա պետք է այդ մասին անհապաղ զեկուցի որևէ տնօրենի կամ անմիջապես կամ իր անմիջական ղեկավարի միջոցով, որն էլ իր հերթին պետք է տեղեկացնի WWF Ինտերնեյշնլի գլխավոր գործառնական տնօրենին, ով կապահովի խնդրո առարկայի անհապաղ և պատշաճ հետաքննությունը:

Եթե աշխատողը չի կարող զեկուցել նշված ճանապարհով, կարող է օգտվել WWF Ինտերնեյշնլի թեժ գծի կանոնակարգից (տես՝ ստորև):

Կասկածվող խարդախության հետաքննություն

Գլխավոր գործառնական տնօրենի պարտականությունն է ապահովել յուրաքանչյուր հայցի պատշաճ և անհապաղ հետաքննությունը և բացահայտումը՝ համաձայն արձագանքման պլանի: Գլխավոր գործառնական տնօրենը համապատասխան զարգացումների մասին պետք է պատշաճ կերպով տեղեկացնի գլխավոր տնօրենին, կառավարման թիմին և վերստուգիչ հանձնաժողովին: Խարդախության կամ կոռուպցիայի յուրաքանչյուր դեպքի հետաքննության ավարտին գլխավոր գործառնական տնօրենը պետք է ներկայացնի զեկույց: Ստորև բերվում են զեկույցի նվազագույն պահանջները.

- Տեղի ունեցածի մանրամասները, կազմակերպության կրած վնասը /առկայության դեպքում/, ինչպես է այն բացահայտվել, հնարավոր պատճառները:
- Ինչպիսի գործողություններ են ձեռնարկվել խարդախության կամ կոռուպցիայի մեջ ներգրավված անձանց նկատմամբ:
- Ինչպիսի գործողություններ են ձեռնարկվել կորցված գույքի և ֆինանսական միջոցների վերականգնման ուղղությամբ:
- Քաղված դասեր և ձեռնարկված միջոցառումներ խարդախության կամ կոռուպցիայի նմանատիպ դեպքերի կրկնությունը կանխելու ուղղությամբ:

Որևէ աշխատողի կողմից իրականացված խարդախ կամ կոռուպցիայի գործողությունը պետք է դիտարկվի որպես կոպիտ խախտում և կիրառվեն համապատասխան կարգապահական միջոցառումներ: Խարդախության ցանկացած դրսևորման դեպքում՝ լինի դա իրականացված կողմնակի անձի կամ աշխատակցի կողմից, WWF-ը կարող է նաև քաղաքացիական գործ հարուցել կորստի վերականգնման նպատակով:

WWF թեժ գծի կանոնակարգը

Թեժ գծի կանոնակարգը մի մեխանիզմ է, որը հնարավորություն է տալիս զեկույցներ ստանալ ապօրինի գործողությունների կամ WWF-ի հիմնական միջոցների սխալ գործածության վերաբերյալ՝ միևնույն ժամանակ պաշտպանելով զեկույցողին պատժից:

Կասկածելի վարքագիծ- Նախատեսված է այն իրավիճակների համար, երբ մի աշխատողը կասկածում է մյուսին որևէ անօրինական գործողություններ կատարելու կամ կասկածելի վարքագծի մեջ, որոնք առնչվում են WWF-ի հիմնական միջոցներին: Նման գործողությունների շարքին են դասվում բացահայտ գողությունը (սարքավորումների կամ կանխիկ դրամի), ծախսերի վերաբերյալ կեղծ հաշվետվությունները, WWF մենեջերին կամ աուդիտորին սխալ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը կամ աշխատակցի շահերի բխումը, որի արդյունքում կարող է ֆինանսական վնաս հարուցվել WWF-ին և հանգեցնել կոռուպցիայի: WWF-ը քաջալերում է իր աշխատակիցներին զեկույցել նմանատիպ կասկածելի վարքագծի վերաբերյալ և ստեղծել է համակարգ, որը թույլ է տալիս անհրաժեշտության դեպքում դա անել անանուն:

Զեկույցի ներկայացում- Եթե որևէ աշխատող ունի կասկած անօրինական վարքագծի, WWF-ի հիմնական միջոցների չարաշահման կամ օրենքի խախտման վերաբերյալ, ապա կարող է զեկույցել այդ մասին անանուն (իր ցանկությամբ): Բարեխղճորեն զեկույց ներկայացնելու համար նրան կապահովվի պաշտպանություն հետապնդումներից, ահաբեկումներից, խտրականություններից կամ պատժից:

Աշխատողները կարող են զեկույցել WWF Ինտերնեյշնլի նշված ղեկավարներից յուրաքանչյուրին՝ գլխավոր տնօրեն, գլխավոր գործառնական տնօրենին կամ մարդկային ռեսուրսների և կազմակերպական զարգացման տնօրենին: Նրանց անունները և տվյալները կարելի է գտնել WWF-ի ինտերնետային կայքում և սույն կանոնակարգի վերջում: Զեկույցել կարելի է հեռախոսով կամ գրավոր: WWF-ը շտապ հետաքննություն կանցկացնի՝ հնարավորինս գաղտնի պահելով տեղեկատվություն տրամադրողի ինքնությունը՝ համաձայն ամբողջական և արդար հետաքննություն կազմակերպելու պարտավորության:

Որպես այլընտրանք՝ աշխատակիցները կարող են զեկույցել՝ զանգահարելով անկախ թեժ գիծ, որին կպատասխանի երրորդ կազմակերպությունը: Հաղորդված տեղեկությունն անմիջապես կփոխանցվի WWF-ին՝ հետագա հետաքննության համար: Թեժ գիծ զանգահարողների ինքնությունը իրենց ցանկությամբ կարող է գաղտնի պահվել: Թեժ գծի և դրա հասանելիության պահանջները ներկայացված են սույն կանոնակարգի վերջում, ինչպես նաև WWF-ի ինտերնետային կայքում:

Ստացված բոլոր զեկույցները կուղարկվեն WWF միջազգային վերահսկողության հանձնաժողովին: Հանձնաժողովն անկախ է WWF միջազգային ղեկավարությունից և հաշվետու է WWF տնօրենների միջազգային խորհրդին:

WWF գույքի չարաշահման վերաբերյալ զեկույց ներկայացնող աշխատակիցների պաշտպանությունը

Պաշտպանություն պատժամիջոցների - Աշխատակիցը, որը զեկույց է ներկայացրել կասկածելի վարքագծի վերաբերյալ և վստահ է, որ դրանից հետո իր հանդեպ որևէ տեսակի պատիժ է կիրառվում WWF-ի մեկ այլ աշխատակցի կողմից, պետք է անմիջապես այդ մասին զեկույց ներկայացնի մարդկային ռեսուրսների և կազմակերպական կառավարման տնօրենին:

Պատժի վերաբերյալ զեկույցները անմիջապես կհետաքննվեն ամբողջական ու արդար հետաքննության պահանջներին համապատասխան՝ գաղտնիության հնարավորինս պահպանմամբ: Հետաքննություն անցկացնող կազմակերպությունը հետաքննության արդյունքների մասին պետք է տեղեկացնի աշխատակցին:

WWF-ը խստորեն դատապարտում է և չի հանդուրժում պատժի իրականացում այն աշխատակիցների հանդեպ, որոնք բարեխղճորեն մտահոգվում են WWF-ի գործունեության համար: Ցանկացած աշխատող, որը նման վերաբերմունք կցուցաբերի, կենթարկվի պատժի ընդհուպ մինչև աշխատանքից ազատում:

Ջիմ Լեապե	Գլխավոր տնօրեն +41 22 364 9280
Ջուդի Սլատյեր	Գլխավոր գործառնական տնօրեն + 41 22 364 9278
Քրիս Հաթըն	Մարդկային ռեսուրսների ու կազմակերպչական զարգացման տնօրեն + 41 22 364 9259

Թեժ գիծ: Ստորև կարող եք գտնել թեժ գծի հեռախոսային համարները յուրաքանչյուր երկրի համար- հեռախոսագանգի համար կարող է վճարել զանգահարողը իր ցանկությամբ:

ԹԵԺ ԳԾԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

Աֆրիկյան երկրներ

Մադագասկար
Մոզամբիկ
Զամբիա
Բիմբաբվե
Մալավի
Տանզանիա
Քենիա
Ուգանդա
Ռուանդա
Կոնգոյի Դեմոկրատական
Հանրապետություն
Կամերուն
Գաբոն
Կենտրոնական Աֆրիկայի
Գանա
Նիգեր
Սենեգալ
Կապե Վերդե Կղզիներ
Մավրիտանիա
Գամբիա

Հեռախոսահամարներ

0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)

Ասիա/Խաղաղօվկիանոսյան երկրներ

Չինաստան
Վիետնամ
Լաոս
Կամբոջիա
Թաիլանդ
Մոնղոլիա
Մինգապուր
Պապուա Նոր Գվինեա
Սլովոնիայի Կղզիներ
Ֆիջի
Կուկի Կղզիներ

Հեռախոսահամարներ

00800 3838 3000
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
001 800 442 078
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
800 4411 140
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)

Եվրոպայի/Միջին Ասիայի երկրներ

Իտալիա
Բելգիա
Թունիս (պատկանում է Եվրոպայի
ծրագրին)
Ավստրիա
Ռումինիա
Բուլղարիա
Լեհաստան
Վրաստան
Ադրբեջան
Հայաստան
Արաբական Միացյալ Էմիրություններ

Հեռախոսահամարներ

800 783 776
0800 71025
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)

0800 281 700
08008 94440
00800 110 44 74
00800 441 2392
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
0044 1 249 661 808 (անվճար հեռախոսահամար)
8000 44 138 73

Հավելված
Խարդախության և կոռուպցիայի
քաղաքականության փաստաթղթի (Հունիս 2010)

WWF Էթիկայի Կանոնակարգ (թարմացվել է 2009թ.)

Մեր վերաբերմունքը մեր առաքելության, մեզ շրջապատող աշխարհի և ինքներս մեր հանդեպ

WWF-ն ունի հստակ սահմանված առաքելություն և նպատակ: Մեր բոլոր ծրագրերն ուղղված են այդ առաքելության իրականացմանը: Առաքելության նպատակներին հետամուտ լինելն ավելի հեշտ կլինի, եթե պահպանվեն հետևյալ սկզբունքները.

1. Մենք գլոբալ ենք, անկախ, ներկայացնում ենք տարբեր մշակույթներ և չենք պատկանում որևէ քաղաքական կուսակցության:
2. Մենք օգտագործում ենք առկա լավագույն գիտական տեղեկատվությունը խնդիրները հասցեագրելու համար և քննադատորեն ենք վերաբերվում մեր բոլոր նախաձեռնություններին:
3. Մենք միշտ փնտրում ենք երկխոսություն և խուսափում ենք բախումներից:
4. Մենք ստեղծում ենք հստակ պահպանության լուծումներ մեր ծրագրերի, քաղաքական նախաձեռնությունների, հգորությունների զարգացման և կրթության միջոցով:
5. Մենք ներգրավում ենք տեղական համայնքներին և տեղաբնիկներին մեր դաշտային ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացում և հարգում ենք նրանց մշակութային և տնտեսական կարիքները:
6. Մենք առավելագույնի ենք հասցնում մեր արդյունավետությունը՝ համագործակցություն հաստատելով այլ կազմակերպությունների, կառավարության, բիզնեսի և տեղական համայնքների հետ:
7. Մենք իրականացնում ենք մեր գործողությունները պատասխանատու և ծախսերի առումով արդյունավետ եղանակով և դիմում ենք դոնորների ֆինանսավորմանը հետևողականության և թափանցիկության բարձր չափանիշներին համապատասխան:

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ

Մենք միշտ փորձում ենք նվազագույնի հասցնել մեր գործողությունների արդյունքում շրջակա միջավայրին պատճառվող վնասը (հատկապես անցանկալի) և հավաստիանում ենք, որ դրանք միշտ համապատասխանեն բնապահպանական օրենսդրությանը: Մեր ամենօրյա կյանքում՝ թե աշխատանքային, և թե անձնական, մենք անում ենք ամեն ինչ՝ նվազեցնելու աղտոտումն ու թափոնները և հնարավորության դեպքում օգտագործում վերականգնվող և վերամշակվող նյութեր: Մենք խրախուսում ենք նույն կերպ գործել բոլոր նրանց, ում հետ մենք համագործակցում ենք:

ՄԵՆՔ

- 1. Մեր վերաբերմունքը միմյանց հանդեպ-** Մենք միշտ հարգում ենք մեր գործընկերների իրավունքները, ընդունում մեր միջև առկա տարբերությունների ուժեղ կողմերը, վայելում բազմազանությունը, միմյանց հետ վարվում ենք արժանապատվորեն և հարգանքով, խրախուսում ենք թիմային աշխատանքն ու համագործակցությունը, նպաստում ենք անկողմնակալ ու անկեղծ մթնոլորտի հաստատմանը՝ միևնույն ժամանակ դատապարտելով խտրականության և քաղաքական խարդավանքների բոլոր դրսևորումները:
- 2. Մեր վերաբերմունքը լայն հասարակության հանդեպ-** Այնպես, ինչպես մենք հարգում ենք մեր գործընկերների մշակութային և ազգային բազմազանությունը, այնպես էլ հարգանք ենք տածում աշխարհի ազգերի բազմազանության հանդեպ: Կազմակերպությունից դուրս մեր գործարքներում մենք միշտ ազնիվ ենք ու բաց, երբեք խտրականություն չենք դնում կամ կանխակալ վերաբերմունք չենք ցուցաբերում այլոց հանդեպ մշակութային, ազգային, կրոնական, քաղաքական կամ այլ պատճառներով: Մենք ընդունում և արձագանքում ենք մեզ ուղղված քննադատությանը դասեր քաղելու և սխալներ կրկնելուց խուսափելու նպատակով:
- 3. Մեր վերաբերմունքը կառավարության և կազմակերպությունների հանդեպ-** Որպես գլոբալ, բազմամշակութային կազմակերպություն՝ մենք ընդունում ենք «միասին ավելի լավ է» հասկացությունը, մենք ընդունում և խրախուսում ենք համագործակցությունը համախոհ կազմակերպությունների հետ: Նույնիսկ եթե նրանց առաքելությունները տարբերվում են մեր առաքելությունից, մենք ընդունում ենք նրանց նպատակների արդիականությունն ու արժեքը: Միևնույն ժամանակ մենք պահպանում ենք մեր անկախությունը և վճռականորեն պաշտպանում ենք մեր տեսակետը: Մենք միշտ վստահում ենք մեր գործընկեր կազմակերպություններին, լինեն նրանք ռազմավարական, ֆինանսավորող, թե իրականացնող գործընկերներ:
- 4. Մեր վերաբերմունքը լրատվամիջոցների և հասարակական կարծիք ձևավորողների հանդեպ-** Ընդունելով և գնահատելով աշխարհի լրատվամիջոցների արժեքը մեր տեսակետների տարածման, ինչպես նաև մեր առաքելության և նպատակների մասին կառավարություններին, արդյունաբերությանը և լայն հասարակությանը տեղեկատվության ապահովման գործում, մենք միշտ ազնիվ ենք, չունենք հավակնություններ և քաղաքականապես չեզոք ենք նրանց հետ ունեցած բոլոր առնչություններում: Մենք անում ենք ամենայն հնարավորը, որպեսզի կանխենք մեր կողմից տրված տեղեկատվության շահարկումը կամ չարաշահումը որևէ քաղաքական, ազգային կամ կրոնական տեսակետներին աջակցելու նպատակով, որոնց հետ մենք համաձայն չենք:
- 5. Մեր վերաբերմունքը մեր կորպորատիվ գործընկերների հանդեպ-** Մեր առաքելությանը հասնելու համար մենք ընդունում ենք կորպորատիվ ոլորտին ներգրավելու անհրաժեշտությունը և ոլորտի առաջատարների հետ ակտիվ համագործակցությանը նպաստումը: Մենք աշխատում ենք կորպորատիվ ոլորտի հետ արհեստավարժ, բաց, ազնիվ և անմիջական սկզբունքով: Մենք պահպանում ենք մեր անկախությունը՝ հանգելով նրանց

տեսակետները, մենք խթանում և ոգեշնչում ենք նրանց ընթանալ առաջ՝ դեպի կայուն ապագա:

6. **Մեր վերաբերմունքը մեր մատակարարների և խորհրդատուների հանդեպ-** Արտաքին անկախ ռեսուրսների կարողությունները գնահատելիս մենք միշտ արդար ենք, օբյեկտիվ և բաց նրանց: Մենք չենք ընդունում նվերներ ու կաշառք և թույլ չենք տալիս մեր հանդեպ ուշադրության որևէ նշան, որոնք արվում են մեր որոշման վրա ազդելու նպատակով: Պայմանագիր շնորհելիս մենք հաշվի չենք առնում ընտանեկան, կրոնական, ազգակցական, քաղաքական կամ այլ անձնային կապերը:
7. **Մեր վերաբերմունքը մեր կազմակերպությանը-** Մենք մեր վարվելակերպով միշտ պատիվ ենք բերում WWF-ին, որը բարձրացնում է մեր կազմակերպության գործունեության արդյունավետությունը: Մենք խնամքով ենք վերաբերվում մեր տրամադրության տակ գտնվող ֆոնդերին, կառավարում ենք դրանք խիստ ազնիվ և թափանցիկ եղանակով և մշտապես փնտրում ենք ծախսերի առումով ամենաարդյունավետ լուծումները նույնիսկ սեփական անհարմարության գնով: